

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Ջավադյան

2011 թվականի դեկտեմբերի 22

Հավելված 9

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի՝
2011 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 1117-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

Կաչե Գաբրիելյան

2011 թվականի դեկտեմբերի 30

ՄԻՋԱՆԿՑԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև 6)
«31» դեկտեմբերի 2023թ.
«Ֆիդո Ինվեսթ» ՓԲԸ, ք. Երևան, Մայրաք-Նովյա 3, տարածք 4/1
(ներդրումային բեկեթային անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՐՈՒՄԸ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)
1	Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	-	-	-
2	Տոկոսային և նմանատիպ ծախսեր	269	462	-
3	Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	(269)	(462)	-
4	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	-	-	-
5	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	-	-	-
6	Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ	-	-	-
7	Եկամուտ շահութաբաժիններից	-	-	-
8	Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	272	272	-
9	Այլ գործառնական եկամուտներ	-	-	-
10	Գործառնական եկամուտներ	4	(190)	-
11	Զուտ մասնաճանաչներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	-	-	-
12	Ընդհանուր վարչական ծախսեր	9,299	16,227	-
13	Այլ գործառնական ծախսեր	71	106	-
14	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից գուտ շահույթ (վնաս)	-	-	-
15	Շահույթը (վնասը) մինչև հարկումը	(9,366)	(16,522)	-
16	Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(1,544)	(2,678)	-
17	Ժամանակաշրջանի շահույթ	(7,822)	(13,845)	-
18	Այդ թվում՝	-	-	-
19	Մայր կազմակերպության բաժնեմաս	-	-	-
20	Չվերահսկվող բաժնեմաս	-	-	-
21	Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	792	1,650	-
22	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահսկվածից	-	-	-
23	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	792	1,650	-
24	Դրամական հոսքերի հեջավորում	-	-	-
25	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	-	-	-
26	Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	-	-	-
27	Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	792	1,650	-
28	Համապարփակ ֆինանսական արդյունք	(7,030)	(12,194)	-
29	Այդ թվում՝	-	-	-
30	Մայր կազմակերպության բաժնեմաս	-	-	-
31	Չվերահսկվող բաժնեմաս	-	-	-
32	Մեկ բաժնետոմսի բաժին ընկած շահույթի շահույթ	(70)	(122)	-
33	Մեկ բաժնետոմսի բաժին ընկած շահույթի շահույթ	(70)	(122)	-

Հավանական վավաստագրման ամսաթիվ՝ 15.01.2024

Գործադիր տնօրեն՝ Ահարոն Լևոնյան

Գլխավոր հաշվապահ՝ Չարուհի Ասատրյան



(Handwritten signatures)

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

----- Արթուր Ջավադյան
2011 թվականի դեկտեմբերի 22

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 1117-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

----- Վաչե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի 30

ՄԻՋԱՆԿՑԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ձև 7)

Ֆինանսական վիճակի մասին
«31» դեկտեմբերի 2023թ.

"Ֆիդո Ինվեսթ" ՓԲԸ, ք. Երևան, Սայաթ-Նովա 3, տարածք 4/1
(ներդրումային ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված/չստուգված)
1	Ակտիվներ		
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	-	-
1.2	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,345	-
1.3	Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-
1.4	Պահանջներ հաճախորդների նկատմամբ	-	-
1.5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	38,519	-
1.6	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	-	-
1.7	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	-	-
1.8	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	2,936	-
1.9	Հետաձգված հարկային ակտիվներ	1,431	-
1.10	Այլ ակտիվներ	60	-
	Ընդամենը՝ ակտիվներ	45,290	-
2	Պարտավորություններ		
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-
2.3	Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր	-	-
2.4	Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	9,535	-
2.5	Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-
2.6	Պահուստներ	-	-
2.7	Այլ պարտավորություններ	2,269	-
	Ընդամենը՝ պարտավորություններ	11,805	-
3	Սեփական կապիտալ		
3.1	Կանոնադրական կապիտալ	40,000	-
3.2	Էմիսիոն եկամուտ	-	-
3.3	Պահուստներ՝	1,650	-
3.3.1	Գլխավոր պահուստ	-	-
3.3.2	Վերազնահատման պահուստներ	1,650	-
3.4	Զբաղիված շահույթ (վնաս)	(13,845)	-
3.5	Սեփական կապիտալի այլ տարրեր	5,680	-
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ	-	-
	Փոքրամասնության բաժնեմաս	-	-
	Ընդամենը՝ սեփական կապիտալ	33,486	-
	Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական նստիքային	45,290	-

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 15.01.2024



Գործադիր տնօրեն՝  Արտուր Լևոնյան

Գլխավոր հաշվապահ  Չարուհի Ասատրյան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

----- Արթուր Ջավադյան
2011 թվականի դեկտեմբերի 22

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 1117-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

----- Վահե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի 30

ՄԻՋԱՆԿՑԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև 8)
«31» դեկտեմբերի 2023թ.

«Ճիրո Բնվաթ» ՓԲԸ, ք. Երևան, Մալաթ-Նովա 3, տարածք 4/1
(ներդրումային ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Մեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ / վնաս	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահսկող արկից	Վաճառքի համարի մուտքի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներ ից օգուտներ	Ծրագրված շահույթ/վնաս	Միջանկյալ շահույթ/աժիաներ	Մեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը	Զվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը կապիտալ	
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Զուտ գումարք												
Հորիզոններ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I տարրական)															
1. Մնացորդ նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի ----- թ. (ստուգված/չստուգված)															
2. Վերահաշվարկված մնացորդ															
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետուների (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝															
4. Համապարփակ եկամուտ															
5. Ետադրարժիներ															
6. Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝															
7. Ներքին շարժեր, այդ թվում՝															
8. Մնացորդ նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ ----- թ. (ստուգված/չստուգված)															
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II տարրական)															
9. Մնացորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2023թ. (ստուգված/չստուգված)															
10. Վերահաշվարկված մնացորդ															
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետուների (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	40,000	-	40,000	-	-	-	-	-	-	-	-	-	40,000	-	40,000
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	40,000	-	40,000	-	-	-	-	-	-	-	-	-	40,000	-	40,000
12. Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	1,650	-	-	(13,845)	-	-	(12,194)	-	(12,194)
13. Ետադրարժիներ															
14. Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝															
15. Ներքին շարժեր, այդ թվում՝												5,680	5,680	-	5,680
15.5. Մեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												5,680	5,680	-	5,680
16. Մնացորդ միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30.09.2023թ.	40,000	-	40,000	-	-	-	1,650	-	-	(13,845)	-	5,680	33,486	-	33,486

Հաշվառողական վավերացման ամսաթիվ՝ 15.01.2024

Գործադիր տնօրեն՝ *Ս. Մանուկյան* Սևարտն Լևոնյան

Գլխավոր հաշվապահ՝ *Զ. Բաբայան* Չարուհի Ասատրյան



Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

----- Արթուր Ջավադյան
2011 թվականի դեկտեմբերի 22

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 1117-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

----- Վաչե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի 30

ՄԻՋԱՆԿՑԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև 9)
(ուղղակի մեթոդ)
«31» դեկտեմբերի 2023թ.
«Ֆիդո Ինվեսթ» ՓԲԸ, ք. Երևան, Սայաթ-Նովա 3, տարածք 4/1
(ներդրումային ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
<i>Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i>		-	(14,073)
Ստացված տոկոսներ		-	-
Վճարված տոկոսներ		-	-
Ստացված կոմիսիոն գումարներ		-	-
Վճարված կոմիսիոն գումարներ		-	(6)
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)		-	-
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ (վնաս)		-	(5)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		-	(8,745)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		-	(5,318)
<i>Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</i>		-	-
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում)		-	-
այդ թվում՝ Փոխատվությունների նվազում (ավելացում)		-	-
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		-	-
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում)		-	-
այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում)		-	-
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		-	-

այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում (նվազում)		-	-
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		-	-
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		-	(14,073)
Վճարված շահութահարկ			-
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		-	(14,073)
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		-	-
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		-	-
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-	(2,992)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		-	(36,590)
Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		-	(39,582)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահութաբաժիններ		-	-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		-	-
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		-	16,000
Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		-	-
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		-	40,000
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		-	-
Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		-	56,000
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		-	0
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ՝ աճ (նվազում)		-	2,345
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		-	2,345

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝
15.01.2024



Գործադիր տնօրեն՝

M. Dimal

Ահարոն Լևոնյան

Գլխ. հաշվապահ

S. Khachatryan

Զարուհի Ասատրյա

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

----- Արթուր Զավադյան
2011 թվականի դեկտեմբերի 22

Հավելված 8
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի՝
2011 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 1117-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

----- Վաչե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի 30

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

«ՖԻՂՈ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հիմնական գործունեությունը ներդրումային ծառայությունների մատուցումն է: Ընկերությունը մատուցում է հետևյալ տեսակի ներդրումային ծառայություններ՝

- 1) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
- 2) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:

Ընկերությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2023թ հունիսի 27-ին, Վերջինիս կողմից Ընկերությանը տրվել է ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա (Լիցենզիա՝ թիվ 0026, գրանցման համար՝ 26):

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ընկերությունը գտնվում է ք. Երևան, Սայաթ-Նովա 3, տարածք 4/1 հասցեում, որը հանդիսանում է նաև Ընկերության իրավաբանական հասցեն:

Ընկերությունը ներկայացուցչություններ և մասնաճյուղեր չունի և չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

Ընկերությունը խորհուրդ չունի, և կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը:

Ընկերությունը պատրավոր է գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով՝ հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 3 ամսվա ընթացքում:

Ընկերությունը չունի տնօրինություն: Ընկերության գործադիր տնօրենը Ահարոն Լևոնյանն է:

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2023 թվականի դրությամբ կազմում է 40,000,000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ, որը բաղկացած է 100 (հարյուր) սովորական անվանական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ընկերության բաժնետերերն են՝

- 1) Ահարոն Լևոնյան՝ 60% մասնաբաժնով,
- 2) Ֆիդո ՍՊԸ՝ 40% մասնաբաժնով:

Ընկերության նշանակալից մասնակիցներն են Ահարոն Լևոնյանն ու Ֆիդո ՍՊԸ:

Ընկերության ղեկավարները վարձատրվում են համաձայն իրենց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի, ամսական մեկ անգամ:

Ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձի վճարման չափը պետք է հաստատվի ժողովի կողմից:

Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ), Ընկերության ժողովի կողմից հաստատված «Հաշվապահական հաշվառման քաղաքականության» և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերով սահմանված պահանջների ու ցուցումների:

Ընկերությունը ֆինանսական հաշվետվությունները կազմում է եռամսյակային (աճողական) և տարեկան կտրվածքով: Ընկերության առաջին հաշվետու ժամանակաշրջանն էր 2023 թվականի 3-րդ եռամսյակը:

Ֆինանսական հաշվետվությունների փաթեթը բաղկացած է հետևյալ հիմնական հաշվետվություններից՝

- 1 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն,
- 2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն,
- 3 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն,
- 4 Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվություն,
- 5 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվությունները կազմում է հաշվեգրման սկզբունքի հիման վրա, բացառություն է կազմում դրամական հոսքերի մասին հաշվետվությունը:

Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու համար կիրառում է անընդհատության, արժանահավատության, հաշվեգրման, հասկանալիության, էականության և միասնականության, համարդրելիության, սահմանազատման և հետևողականության սկզբունքները:

Ֆինանսական հաշվետվություններում համանման էական հոդվածները ներկայացված են առանձին:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

Եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև ակտիվներն ու պարտավորությունները չեն հաշվանցվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը թույլատրվում կամ պահանջվում է ՖՀՄՍ-ով:

Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը ՀՀ դրամն է: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են հազար դրամներով:

2.2 Եկամուտների ու ծախսերի ճանաչումը

Ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի բոլոր հոդվածները ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով տվյալ ժամականաշրջանի շահույթում կամ վնասում, եթե այլ բան չի պահանջվում ՖՀՄՍ-ով:

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Ընկերությունը աշխատակիցների չօգտագործած արձակուրդների պահուստը հաշվառում է տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2.3 Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Ընկերությունը իրականացնում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով արտահայտված գործառնություններ:

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունները պատրաստման նպատակով կիրառվել են հետևյալ փոխարժեքները՝

31.12.2023	
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	447.9

2.4 Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված շահութահարկերից:

Ընթացիկ շահութահարկ գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ եռամսյակի կտրվածքով, իսկ հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում է շահութահարկի գծով կատարված կանխավճարների հետ, եթե այդպիսիք առկա են:

Հետաձգված հարկեր առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույթների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույթները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

2.5 Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը իր հաշվեկշռում ճանաչում է միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- բ) միևնույն ժամկետը պահվող ներդրումներ,
- գ) փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքով, բացառությամբ փոխառությունների ու դեբիտորական պարտքերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Բացառություն են կազմում նաև բաժնային գործիքների մեջ ներդրումները, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավաստորեն չափվել, ինչպես նաև այնպիսի ածանցյալ գործիքներ, որոնք կապված են դրանց հետ և պետք է մարվեն այդպիսի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին ներդրումային ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ դասակարգել ակտիվը որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող (առանց հետագա վերադասակարգման իրավունքի) միայն այն դեպքում, երբ նման դասակարգումը թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել չափման և ճանաչման համար կիրառվող մոտեցումների անհետևողականությունը (հաշվառման անհամապատասխանությունը):

Ֆինանսական պարտավորությունը (կամ դրա մի մասը) դադարում է ներկայացվել Ընկերության հաշվեկշռում այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, մասնավորապես, երբ պայմանագրում նշված պարտավորությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմին փոխանցած ֆինանսական պարտավորության (կամ դրա մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո հիմնականում բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

2.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության համար Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում 33 Կենտրոնական բանկում և այլ բանկերում բացված հաշիվներում առկա միջոցները:

2.7 Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում հետագայում ամորտիզացված արժեքով չափվելու կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու չափանիշներին, սկզբնական ճանաչումից հետո դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Սկզբնական ճանաչումից հետո շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները չափվում են իրենց իրական արժեքով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ:

Որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

2.8 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ հանդիսացող ակտիվներ են, որոնք կազմակերպության կողմից գնահատվել են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի և վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ:

Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրենց իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով, հաշվի չառնելով այն ծախսումները, որոնք կազմակերպությունը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ բաժնային գործիքների մեջ ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված ծուկայական գին, և որոնց շուկայական արժեքը չի կարող արժանահավաստորեն չափվել:

2.9 Տոկոսներ

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

2.10 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցի միավորը ճանաչվում է հետևյալ պայմանների միաժամանակ բավարարելու դեպքում՝

- ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և
- բ) միավորի սկզբնական արժեքը հնարավոր է արժանահավաստորեն չափել:

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, 33 դրամով: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հիմնական միջոցի մաշվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է դրա օգտակար ծառայության ընթացքում՝ գծային մեթոդով: Հիմնական միջոցի մաշվող գումարը իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքի և մնացորդային արժեքի տարբերություն:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, բանի որ դա առավելագույն է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպասման ակնկալվող եղանակը:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայությունների ժամկետներն են՝

- Համակարգչային տեխնիկա՝ 1-3 տարի,
- Տնտեսական և գրասենյակային գույք՝ 5-8 տարի
- Այլ հիմնական միջոցներ՝ 8 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

Հիմնական միջոցների ընթացիկ սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

Հիմնական միջոցը ապաճանաչվում է, երբ այն օտարվում է կամ դրա օգտագործումից այլևս չի ակնկալվում տնտեսական օգուտ:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացած օգուտը չի համարվում հասույթ:

Ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների համար կատարված հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են տվյալ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են գծային եղանակով՝ գնահատված օգտակար ծառայության ընթացքում, և ճանաչվում են կատարման ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ժամկետներն են՝

- Համակարգչային ծրագրեր՝ 5-10 տարի,
- Լիցենզիաներ և հեղինակային իրավունքներ՝ 1-10 տարի,
- Այլ ոչ նյութական ակտիվներ՝ 1-10 տարի:

2.11 Հաճախորդների միջոցները

Ընկերությունը չունի հաճախորդի միջոցները ի շահ իրեն օգտագործելու իրավունք, այդ իսկ պատճառով հաճախորդի միջոցների հաշվառումը տրվում է հետաձգվելու շահին հողվածներով, և այդ միջոցները չեն ներառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

2.12 Ներդրումային ընկերությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր

Եթե Ընկերությունը ունենա իր կողմից թողարկված պարտքային արժեթղթեր, որոնք իրենցից ներկայացնում են ֆինանսական պարտավորություններ, ապա դրանց նկատմամբ կկիրառվի ֆինանսական պարտավորությունների հաշվառման բաղադրանքները:

Ընկերությունը չունի թողարկված պարտքային արժեթղթեր:

2.13 Տարբերակումն այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություններից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ

Ընկերության համար պայմանական ակտիվ և պարտավորություն կհամարվի հնարավոր ակտիվը կամ պարտավորությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից: Պայմանական ակտիվներն ու պարտավորությունները չեն արտացոլվում Ընկերության հաշվապական հաշվեկշռում:

Ընկերությունը չունի պայմանական ակտիվներ և պարտավորություններ:

2.14 Կապիտալ և էմիսիոն եկամուտ

Ընկերության կանոնադրական կապիտալ իրենից ներկայացնում է Ընկերության թողարկված բաժնետոմսերի բանակի և մեկ բաժնետոմսի անվանական արժեքի արտադրյալը:

Եթե թողարկված բաժնետոմսերի իրացման արդյունքում ստացված գումարների իրական արժեքի և բաժնետոմսերի անվանական արժեքի տարբերությունը լինի դրական, ապա այն կճանաչվի որպես էմիսիոն եկամուտ:

2.15 Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

